ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

MARTUNI WOMEN'S
COMMUNITY COUNCIL
NGO

1402, ՀՀ Գեղարքունիքի մարզ,
ք. Մարտունի1402, Պռոշյան փ. 8,
բջջ.: (+91)21-13-96,
E-mail: kananc7@gmail. Com
www.martunicenter.am

8, Proshyan Str., Martuni town,
Gegharkunik marz, 1402 Armenia
mob.: (+91)21-13-96,
E-mail: kananc7@gmail.com
www.martunicenter.am

N01-290424

Ք. Մարտունի

ՀՀ Գեղարքունիքի մարզի
Մարտունի համայնքի ղեկավար
պարոն Հովհաննես Հովեյանին

Հարգելի՛ պարոն Հովեյան,

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 2000 թվականին և մինչ այժմ տարաբնույթ գործունեություն է իրականացնում ինչպես Գեղարքունիքի մարզում, այնպես էլ ՀՀ այլ մարզերում:

ՀԿ առաքելությունն է.

Նպաստել համայնքների զարգացման գործում համայնքի բնակչության մասնակցային վարքի ձևավորմանը և այդ միջոցով համայնքների տնտեսական, սոցիալական, մշակութային խնդիրների արդյունավետ լուծմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին:

ՄԿՀԽ ՀԿ-ն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ հանդիսանում է Կանանց աջակցման կենտրոն Գեղարքունիքի մարզում՝ տարաբնույթ ծառայություններ մատուցելով ընտանիքում բռնության ենթարկված անձանց: Վերջին տարիներին իրականացնում է նաև կանանց տնտեսական հզորացման ծրագրեր, որի նպատակն է նպաստել կանանց տնտեսական անկախությանը:

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն Գերմանական ԴԻ ՎԻ ՎԻ ինթերնեյշնալ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ հանդիսանում է Մեծահասակների կրթության կենտրոն Գեղարքունիքի մարզում:

2020 թվականից ՀԿ-ն զբաղվում է Արցախից տեղահանված ընտանիքների աջակցության հարցերով՝ նրանց տրամադրելով տարաբնույթ ծառայություններ:

2023թ սեպտեմբերյան դեպքերից հետո ՀԿ-ն աշխատում է Գեղարքունիք մարզում ապաստանած ավելի քան 600 ընտանիքի մոտ 2500 անձանց հետ՝ նրանց շարունակաբար տրամադրելով սնունդ, հիգիենիկ, կենցաղային , մանկական սննդի ու խնամքի

պարագաններ, իրավաբանական և հոգեբանական աջակցություն և այլն:Մարտունի համայնքում աշխատել է ավելի քան 180 ընտանիքի հետ:
Մարտունի համայնքում բնակություն հաստատած արցախցի 40 կին այժմ ՀԿ-ում նոր հմտություններ են ստանում՝ լուծելու իրենց ինքնազբաղվածության հարցը:Նախկինում տեղացի անապահով ընտանիքների 30 կանայք արդեն ստանալով նմանտիպ հնարավորություններ,լուծել են իրենց զբաղվածության հարցը:
Սակայն ոչ բոլոր կարիք ունեցող, հատկապես անչափահաս երեխա ունեցող կանայք կարող են մասնակցել այս գործընթացներին, քանի որ Մարտունի համայնքում չկա որևէ անվճար կառույց, որտեղ մայրերը կարող են օրվա որոշակի ժամերի ապահով և անվտանգ թողնել իրենց երեխաներին:
Այս խնդրի լուծման նպատակով մեր կազմակերպությունը ցանկանում է Մարտունի քաղաքում գործարկելու Մանկական զարգացման կենտրոն:
Կենտրոնը անճար ծառայություններ է մատուցելու ինչպես տեղացի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժած և Մարտունի համայնքում բնակություն հաստատած երեխաների՝ նպաստելով նրանց ճանաչողական, հուզական և սոցիալական հմտությունների զարգացմանը և ըստ այդմ՝ հասարակության մեջ լիարժեք ինտեգրմանը:
Մանկական զարգացման կենտրոնում երեխաները ոչ ֆորմալ կրթության միջոցով ծանոթանում են հոգեհուզական ուսուցմանը, զարգացնում և բարելավում են տարատեսակ հմտություններ, շփվում են իրենց հասակակիցների հետ, ինչպես նաև մասնակցում համայնքային տարաբնույթ միջոցառումների: Կենտրոն կարող են այցելել օրական 25-30 երեխա, շաբաթական՝130 երեխա:
Կենտրոնի դասընթացավարներն անցնում են մասնագիտական վերապատրաստումներ՝ լիարժեք պատրաստ լինելով տարատեսակ խոչընդոտների հանդիպող երեխաների հետ աշխատանքին և նպաստելով համայնքի զարգացմանը:
Կենտրոնի գործարկման նպատակով իր պատրաստակամությունն է հայտնել Մարդը կարիք մեջ միջազգային կազմակերպությունը , որ կարող է հոգալ շենքի վերանորոգման, կահավորման և գործարկման համար անհրաժեշտ ծախսերը:
Սակայն «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն չունի բավարար շենքային պայմաններ Մարտունի քաղաքում Մանկական զարգացման կենտրոն գործարկելու համար:
Դիմում եմ Ձեզ խնդրանքով. «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպությանը Մարտունի քաղաքում անհատույց տրամադրել 70-80 մետր քառակուսի շենքային տարածք՝ Մանկական զարգացման կենտրոն գործարկելու համար:
Ինչպես վերևում նշվել է, կազմակերպությունը կհոգա շենքի վերանորոգման, կահավորման և հետագա գործարկման ծախսերը:
Կանխավ շնորհակալ եմ :

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ նախագահ Ա. Գևորգյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ» WOMEN'S COUNCIL OF MARTUNI COMMUNITY NGO
03410372
Հասարակական կազմակերպություն
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ
Non-Governmental Organization

Новые сообщения

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «28» Դեկտեմբերի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՐՇԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, հասցե՝ Մարտունի ք. Երևանյան փողոց 40

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանձնաժողովի որոշում 13.06.2017թ. թիվ 57, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի Մարտունի տարածքային գրասենյակի 23.06.2017թ. անշարժ գույքի անհատույց օգտագործման / փոխատվության պայմանագիր

4. ՀՈԳԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵԼԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-003-0509-0010

Մակերեսի չափը (հա)՝ 0.475

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

83% 9:39

09:37

Dav-Mar
В сети

Վկայական N 28122017-05-0047, գաղտնաբառ՝ J8NCITXAVIPA
09:37

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	05-003-0509-0010-001	Մանկապարտեզ	897.2 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
2	05-003-0509-0010-002	պարիսպ	40.7 ք.մ., 61 խ.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անի Աբգարյան

գրանցումն [illegible]ը՝ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ակ[illegible]

Վկայական N 28122017-05-0047, գաղտնաբառ՝ J8NCITXAVIPA

09:37

Dav-Mar

ՇԵՆՔԻ
ՍԱՍՏԱԲԸ